«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 42§6 «09» 03. 2022թ.

ԵՊՀ ԻՄ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 08.02.2022թ. № 25/2 հրամանը և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավարում իրականացնելու լիազորություններ սահմանելու նպատակով՝

Հրամայում եմ.

1. Սահմանել, որ ԵՊՀ ԻՄ-ի ներքոնշյալ կառուցվածքային ստորաբաժանումները գործում են ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի անմիջական ղեկավարությամբ.

1) Հաշվապահություն,
2) Ֆակուլտետներ,
3) Մասնագիտական կրթության և որակի ապահովման բաժին,
4) Անձնակազմի կատավարման և իրավական ապահովման բաժին,
5) Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին,
6) Գնումների մատակարարման և պահեստավորման բաժին,
7) Տնտեսական գործունեության կազմակերպման և սպասարկման բաժին:

2. ԵՊՀ ԻՄ-ի ներքոնշյալ կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավարումը հանձնարարել փոխտնօրենին.

1) Ուսումնամեթոդական վարչություն,
2) Ֆակուլտետներ,
3) Համամասնաճյուղային ամբիոն,
4) Արտաքին կապերի բաժին,
5) Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժին,
6) Գրադարան
7) Դասախոսական հյուրատուն (կոտեջ):

3. Լիազորել ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրենին՝ սույն հրամանի 2-րդ կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով ընդունելու իրավական ակտեր (հրամաններ), այդ թվում ուսանողների նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու, նույն կուրսում թողնելու և ուսումնական գործընթացին առնչվող այլ հարցերի վերաբերյալ, բացառությամբ ԵՊՀ ԻՄ-ից ուսանողներին հեռացնելու և նշված ստորաբաժանումների աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ անհատական իրավական ակտերի:

4.Սույն հրամանի 1-ին կետի նշված կառուցվածքային ստորաբաժանումների ընթացիկ աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը վերապահել ԵՊՀ ԻՄ-ի տնօրենին:

5.Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրենին և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ